Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Օրօր ասեմ՝ որ քունդ ևս քաղցրանայ,
Աղնիւ անձդ՝ աղնուապար զարդանայ,
Քնիր տղաս, ժամ պիտի գայ որ զարթնիս.
Զարթնի և քո հայրենիքդ 'ի բարիս,
Անոյշ յուսով երջանկութեան քուն եղիր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացիր։

Գրիգոր Բրբուքեան Մոդինեանէն։

ԱԶԳԱՑԻՆ

ՆՈՒԻՐՆԵՐ

Օ՞ւրնչ այլ ինչ այնքան նուիրական էին մեր նախնեաց, եթէ ոչ մեր Քրիստոնէական Ս. Հաւատք և Եկեղեցիք։ Եւ զի՞նչ նոքա իւրեանց հեղեղանման արեանց հոսմանց փոխարէն փառք և յիշատակք թողուցին մեզ, եթէ ոչ դարձեալ մեր Ս. Հաւատք և Եկեղեցիք։

Պա՞ն նաև բաց 'ի մեր Ազգային մի քանի յատկութեանց՝ այլ ևս նուիրական կոթողք փառաց և սխրագործութեանց անցեալ ժամանակաց և նախնեաց՝ անմահ և պաշտելի բարերարացն ասեմ Հայաստանի, որք այժմ ակնարև լինին և մխիթարեն զմեզ.—ո՞հ, չի՞ք կամ չեն այլ ևս։

Արդարև մեր մնացեալ պարծանքները՝ քանի՞ թանկագնի յանձնուած են մեզ 'ի նախնեացս, քանի՞ հարուած, քանի՞ տառապանք և վիշտք կրելով, քանի՞ սով և սրածութիւնք ընդունելով՝ վերջապէս ընդ հուր և ընդ ջուր խոյացեալ՝ մեր սիրելի Հայրենեաց սրտաշարժ՝ աղեխարշ և երկնային զթութեանց արժանի աւերակաց մէջ հաղիւ մեր դարաւոր՝ այլ շինջեալ պերճութեանց նշխարներէն և նուիրական փառքերէն կը տեսնեմք՝ միմիայն մեր Ս. Հաւատքը և Եկեղեցիքը։

Հայք ամենայն արկածից և տագնապներու մէջ թէև ակամայ զիջած են տանիլ բազում զրկանաց և կորուստներուն, բայց չ՝ուսան նոքա, չ՝կարացին և չեն երբէք զիջանելու ներել իւր Ս. Հաւատքին և Եկեղեցեաց դէմ մաքառող մոլորեցուցչաց և չարամիտ յարձակողաց վերայ, որոյ վասն իւրեանց կեանքերը զոհած են և կը զոհեն միշտ անխնայ. որպիսեօք և եթէ յաջողած են և կը յաջողին պահպանել զնոսա. որք այսօր մեր առաջին փառքն և մխիթարութիւնք կը հանդիսանան։

Սակայն ցաւ 'ի սիրտ պէտք է խոստովանիլ, զի այժմ մեք՝ միայն մեր նախնեաց քաջագործութեանց և արդեանց վերայ պարծենալով կը բաւականանամք. հետեւաբար մեք ևս ազգովին չենք ջանար 'ի սրտէ գէ՛թ նոցա հաստատութեան և ներքին պայծառութեան։

Մասնաւորապէս խօսելով՝ այսօր մեր ազգի մնացեալ փառաց մէջ նախապատիւն է Մայր Աթոռս Հայաստանեայց Կաթողիկէ Ս. Էջմիածին՝ որպէս նուիրական և գահանիստ տեղի Կաթողիկոսաց Ազգիս, և սորա վերայ ամեն Հայ բաւական պարծանք և սփոփանք կը տածէ իւր եռանդեան և զղացմանց մէջ։ Բայց քանի՞ անձինք արդեօք կ՝երևին, որք անձկակարօտ տենչանօք և ճշմարիտ և հարազատ սիրով հետամուտ եղած լինին Ս. Էջմիածնի ներքին և արտաքին զրութեան և

բարեկարգ պայծառութեան վերայ տեղե-կութիւն ստանալով՝ ուզում չափ աքնին ըստ կարելոյն զարդարել զայն և փառաւորապէս շողացնել: Եթէ չսխալիմք, կարծեմք խիստ սակաւ ոմանք կը գտնուին՝ որք մի բարի զգացմունք և խանդ կը սնուցանեն իւրեանց սրտից մէջ յայսմ մասին, սակայն զայնս գործադրող՝ աւելի ոչ ոք կերևի . . . :

Այսպիսի պակասութեան և անտարբերութեան պատճառները առայժմ կը դժուարանամք լուծել. բայց Ազգիս մէջ ընդհանրապէս ամենայն տեղ հոգևորականաց և աշխարհականաց մէջ շարունակեալ աններդաշնակ և անհամաձայն յարաբերութիւնքը բաւական մեծ առիթ գտնուիլը չկարեմք լռութեան յանձնել, և նոյն իսկ հոգևորականաց բազմաց սրտից և հոգւոց մէջ տիրող անհոգութիւնը, որ յոյժ վնասակար է:

Արդ Վ.եհ. Կաթողիկոս յորէ անտի ամբարձման 'ի Գահ Հայրապետութեան Հայոց՝ Ազգիս լուսաւորութեան և յառաջադիմութեան անհրաժեշտ պիտոյքը հոգալ ցանկանալով, և հոգևորականաց ընդ միմեանս գեղեցիկ և ներդաշնակաւոր յարաբերութեամբք միանալոյ համար տըքնելով, նա և Ս. Եկեղեցեաց և յատկապէս Մայր Աթոռոյ մերոյ Ս. Էջմիածնի ներքին և արտաքին պայծառութեան և բարեկարգութեան համար՝ ամեն ջանք և ճիգ յանձն առնլով՝ կ'աշխատի զայն ցարդ յարատևած թերի և նուաղ վիճակէն և անշուք դիրքէն ազատել, և փառաւոր և հոյակապ բարեզարդութեան տանել:

Աստի նախ՝ երկնաւոր Գանձ Եկեղեցւոյն Հայաստանեայց՝ հրաշալի նշխարք սրբոց, և Քրիստոսի Փրկչի Կողամուխ Գեղարդն, և մեր նախնեաց ջանից արդիւնքներ և յիշատակներ եղած Եկեղեցական զանազան զգեստները, անօթները, զարդերը են — որք մեզ համար հաղուագիւտ հնութիւնք կը համարուին, — անխնամ վիճակէն հանելով՝ ապահով մաքուր և բարեվայելուչ պահպանելոյ համար 'ի մխիթարութիւն և 'ի փառաւորութիւն ուխտաւորաց և համայն ազգայնոցս, Ս. Էջմ. Տաճարի արևելեան կողմը երեք մեծ զըմբեթայարկ պահարաններ կառուցանել տըւաւ: Եւ այս տարի անձնական տկարութեան պատճառաւ 'ի Տփխիս գտնուած միջոցում*)՝ Նորին Ս. Օծութիւնն ջանաց նոյն պահարանաց մէջ պէտք եղած դարանները (շկապ) և այլ շինութեանց կարևորութիւնքը հոգալ և լրացնել: Վանորոյ Տփխիսաբնակ առաքինասէր և եռանդուն Ազգայնոց ոմանց գեղեցիկ յորդորներ ուղղեց. որք ևս յօժարակամ սիրով և բարի զգացմամբք ընդունեցին Նորին Վ.եհ. Օծութեան Ազգօգուտ խրատները, և Ս. Աթոռոյս նուիրեալ յիշատակեցին հետևեալները:

Միջին պահարանի համար՝ — ուր պիտի պահպանուին Ս. Գեղարդ, մասունք Սրբոց, Հայրապետական և Եպիսկոպո-

(*) Ուր — 'ի Տփխիս — այլոց վիճակաց նման չէր յաջողած Մայր Ս. Աթոռոյս զանազան շինութեանց 'ի նպաստ նուիրատուութիւնքը ամբողջապէս հաւաքել. և ինչ ինչ հանգամանաց և պարագայից պատճառներէն առիթեալ բարձի թողի մնացած էր. զոր քաջ նկատեց Վ.եհ. Կաթողիկոս, և թողուց զայն յայլում բարեպատեհ ժամանակի 'ի կատար ածել տալ:

սական դաւազանք, և բուրվառներ, — մի հատ մեծ և փառաւոր և ոսկեզօծ, և հինգ հատ փոքրիկ ընկուզեայ դարանք (շկապ), զորս ընծայեց Մեծապ. Եգնիւ Սողոմօն Յօհաննէսեանց Շապուրեանց:

Արևելեան հիւսիսային պահարանի համար՝ — ուր իբրև գանձատուն պէտք է պահպանուին 'ի նախնեաց յիշատակեալ Եկեղեցական այլ և այլ զգեստք, խաչք, անօթք, զարդք, և ամենայն հնութիւնք, — երեք հատ ընկուզեայ և ապակազարդ շկապք, զորս ընծայեց Տօհմական պատուաւոր քաղաքացի Մեծապ. Յօհաննէս Չիթախեանց:

Արևել. հարաւային պահարանի համար՝ — ուր պէտք է պահպանուին առձեռըն միշտ գործածուելիք զգեստներ, ամենայն զարդք Տաճարիս, — մի հատ մեծ ընկուզեայ դարան, զոր ընծայեց Մեծապ. Սմբատ Վարդան-Հախնազարեանց և նորին եղբարք Գէորգ և Ստեփան. և չորս հատ փոքր շկապք, որ Էջմիածին անուանեալ Ս. Գէորգեայ Եկեղեցւոյն արդեամբք շինեցան 'ի ձեռն Երէցփոխան Պ. Սմբատայ՝ և ընծայեցան 'ի յիշատակ համայն ժողովրդականաց նոյն Եկեղեցւոյ:

Տփխիսայ վանուց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ արդեամբք մի սպիտակ կերպասեայ շուրջառ՝ յիշատակ Մայր Աթոռոյս:

Մեծապ. Պ. Յովհաննէս Նատիրեանց՝ 100 րուբլի, Բարեպաշտուհի Մարթա երեցկին Մովսէս Եսայ Քահանայի Սա-յաթնեանց՝ 50 րուբլի, և Մեծ. Պ. Գրիգոր Մամուրեանց՝ նոյնպէս 50 րուբլի նուիրաբերութեամբք՝ երկու տուժին ջահաձև փառաւոր կանթեղներ ընծայեցին Ս. Տաճարիս Էջմիածնի:

Նորոյ Սիօնի Մայր Աթոռոյս մէջ յիշատակ կանգնելով երանելի համբաւոյն ամեն Հայու բարեպաշտ սրտին քանի բաղձալի և անձկալի լինելը քաջ գիտնալով՝ կը գովենք նոյն առաքինասէր մերազնեայց հոգևոր եռանդները 'ի պայծառութիւն և 'ի շինութիւն մեծի Տան Տեառն Աստուծոյ՝ Ս. Էջմիածնի, և մեր խորին զգացմանց և շնորհակալութեանց հաւաստիքը խանդակաթ սրտով և հրապարակաւ կը փութամք պարզել ամսագրոյս միջոցաւ. և կըղձանամք՝ և կ'աղաչեմք մեր սիրելի Ազգայնոց՝ սոյնպիսի բարեպաշտական գործոց մէջ բարի նախանձ զգալով՝ ամեն վանքեր ու Ս. Եկեղեցիքը և Կաթողիկէ Ս. Էջմիածինը չմոռանալ երբէք:

ԿՏԱԿ

ՏԻԿԻՆ ՍՈՒԼԹԱՆԻ ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱՐԵԱՆՑ.

'Ի նուէր Նորակառոյց ժառանգաւորաց Ճեմարանի Մայր Աթոռոյս՝ Բարեպաշտուհի Տիկին Սուլթան Մելիք-Բէգլարեանց Տփխիսեցի՝ հաստատուն կտակաւանդեց Տփխիսայ Սիմէօնովսկի փողոցի մէջ 'ի Կուկիա թաղն գտնուած իւր սեպհական կրկնայարկ տունը հանդերձ գետնովն, ընդ որս և մի հազար ռուբլի:

Սոյնպիսի առաքինութիւն Բարեպաշտ Տիկնոջս՝ արդարև բազում գովեստից արժանի է, որ այժմէն փութացաւ կանգնել իւր անուան բարի և վսեմ արձան՝ յօգուտ

և 'ի յառաջադիմութիւն համայն Աղգիս և Ս. Եկեղեցւոյս՝ նորահիմն բարեպատակ հաստատութեան մէջ բարեկիրթ և անձնանուէր պաշտօնեայներ դաստիարակելոյ և զարգացնելոյ համար անհրաժեշտ եղած դրամական նպաստից մասնակցելով։

Մեծայոյս ենք՝ զի Խարբերդաշտուհի տիկնոջ այս բարեգործութիւնը՝ — որ միանգամայն առաջին բարերարուհին կ'հանդիսանայ նորակառոյց ուսումնարանիս յարատև և արդիւնաւէտ ընթացից և բարւոք կառավարութեան առաջին պէտքը եղած հաստատ եկամտից համար, — մերաղնեայ բարեպաշտ տիկնայց և ունևոր անձանց բարի նախանձը պէտք է շարժէ, որք և պիտի փութան մեծաւ եռանդեամբ և խանդակաթ սիրով՝ իւրաքանչիւրն ըստ կարեաց նպաստել, և յաւիտենական յիշատակաց կոթողներ հաստատել։

Եւ մի՞թէ սակաւ փառք և պատիւ է, որ իւրաքանչիւր բարերար ըստ քանակութեան նուիրանացն՝ որդեգիրներ ունենալով Ժառանգաւորաց Ճեմարանիս մէջ, իւրեանց նիւթական նպաստներով հոգեւոր-աղօթարարներ պատրաստեն 'ի յիշատակ կենդանեաց իւրեանց և ննջեցելոց. որք յետ աւարտման ուսմանցն և դաստիարակութեանց՝ պարտաւոր են ցվերջին շունչ կենացն՝ անձնանուէր սպասաւորել Աղգի և Եկեղեցւոյ. և Հայոցն մանկունքը ազգային դաստիարակութեան և լուսաւորութեան մէջ կարևոր ուսմամբք զարգացուցանելոյ միջոցները անխոնջ ջանիւք հոգալով, նոցին բարի ապագայի համար շաւիղներ պիտի յարդարեն։

ԸՆԾԱՑՔ

ՊԱՐՈՆ ՄԿՐՏՉԻ Գ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՑ.

Մեծապատիւ Պ. Մկրտիչ Գրիգորեան Տէր-Մկրտչեանց Ագուլեցի հետևեալ պարագայքը ընծայեց Մայր Աթոռոյս Տպարանի։

Գաղափարներ Հայաստանի տեսարանաց՝ 44 հատ։

7-ն տեսակ՝ բոլորգիր, շղագիր, գլխագիր, ծաղկագիր Մայրեր՝ իւրեանց պարագայիւքն (ամենն 390 ի չափ)։

Երկու տեսակ ձուլուած մեծ ծաղկագրեր։

Օտանազան տեսակ մեծ և փոքր ծաղիկներ, զարդեր, և ն։

Մի փոքր գործիք գիծ կտրելու։

Մի փոքրիկ կազմարարական շարընկալ։

Մեր 'ի սրտէ խորին շնորհակալութեան հաւաստիքը հրապարակաւ կը մատուցանենք Նորին Մեծապատուութեան, 'և կը գովեմք միանգամայն նորուն առաքինասէր սրտի զգացմանց և եռանդեան իղձը յօգուտ Աղգիս մերոյ և Ս. Եկեղեցւոյ։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն։)

Ի ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ։

Քոզպէտլեանց	25
Սալթիքեանց եղբարք	10
Գրիգոր Աստուածատուրեան Տոնիկեանց	10
Մկրտիչ Պապասենեան	5
Ղազարոս Պայճիարցեան	3
Մարիամ Քոզպէտեանց	2